

ԵՂԻԾԵ ԲԱԶՈՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐՈՆ

Մարդկության պատմության հնագույն ժամանակներից ի վեր իրավունքը միակ գործոնն է, որ կարգավորում է հասարակական փոխադարձ հարաբերությունները, մարդկային հանրակեցության մեջ ծագող թե՛ անհատական, և թե՛ խմբակային շահերի բախումը մեղմացնում, իր նորմերով որոշ սահմանների է բաժանում՝ որոշակի շրջանակների մեջ դնելով այդ շահերի փոխադարձ հարաբերությունները: Մարդկային ցեղի զարգացման առաջին աստիճաններում հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերը կրել են միանգամայն այլ բնույթ: Աստվածային կամքի գաղափարը, շնորհիվ աստվածապետական հզոր տիրապետության, եղել է միակ գործոնը, որն իր անհաղթահարելի ազդեցությունը տարածել է հին մարդու ամբողջ աշխարհայացքի, նրա բոլոր կենսական կողմերի վրա: Հասարակական կյանքի կարգավորությունը հիմնված էր կրոնով, ուր աստվածային կամքը համարվում էր իրավունքի, օրենքների միակ հնարավոր աղբյուրը, մի կամք, որը ժողովրդի հավատի համաձայն արտահայտվում էր կա՛մ անմիջապես, կա՛մ էլ հոգևոր դասի ներկայացուցիչների միջոցով: Մենք տեսնում ենք, թե ինչպես ամբողջ երբայական իրավունքը տոգորված է ահեղ ու անողոք Եֆովայի ոգով, Եֆովայի, որի անունից էին խոսում մարգարեները և որի անունից էին օրենքներ սահմանում Իսրայելի ժողովրդի համար: Մովսես մարգարեի տասը պատգամները, հրեական իրավունքի այդ հիմնական օրենքները, Աստվածայինից տրված, Եֆովայից բխած էին համարվում Իսրայելի ժողովրդի աշխարհայացքի մեջ:

Կանոնական իրավունքը, հիմնված լինելով քրիստոնեական սկզբունքների վրա, իր զարգացման սկզբնական աստիճաններում, տակավին այն ժամանակներում, երբ քրիստոնեական համայնքները չէին հետապնդում քաղաքական իդեալներ, երբ Եկեղեցիները չէին հետապնդում պետական-քաղաքական գերիշխանության նպատակ, ահա այդ կանոնական իրավունքն իր համար աղբյուր ուներ միայն առաքյալների սահմանած կանոնները: Այդ առաքելական կանոնները բխում էին Քրիստոսի քարոզած մտքերից ու խրատներից և ուրեմն տոգորված էին աստվածային-կրոնական ոգով: Հապա Ղուրանը՝ մուսուլմանների իրավաբանական կարգերի ու նորմերի այդ ժողովածուն, որ կազմել է Մուհամմեդն իր հավատացյալների համար, արդյո՞ք նույն աստվածային բնավորությունը չի կրում իր մեջ: Ավելի՞ն՝ իսլամի հաստատվելու ժամանակներից մինչ օրս ճշմարիտ մահմեդականն ապրում է շարիաթի կանոններով և չի ճանաչում որևիցե քաղաքացիական օրենք: Մահմեդական իրավունքի

առաջնակարգ աղբյուրը հենց շարիաթն է՝ օրենքների միակցությունը, որի մեջ է մտնում մահմեդական աշխարհի սրբություն սրբոցը՝ Ղուրանը, իր 114 սուրահներով¹:

Ի դեպ, արաբները շարիա-ճանապարհ բառով էին կոչում նաև Մուհամմեդին, որպես օրենսդրի և «իսկական ճանապարհը» նախաձեռնի:

Մահմեդական աշխարհը, որ մինչև օրս այնպես հավատարիմ ու անհողողող հետևում է իր մեծ մարգարեի սահմանած կանոններին ու օրենքներին, չէ՞ որ այդ բոլորը համարում է Ալլահի կամք, հավատում՝ իբրև Ալլահից իր մեծ մարգարեի միջոցով ստացած կանոններ:

Նույնն է նկատվում նաև հեթանոսական կանոնների աշխարհայացքներում: Ամբողջ հին հնդկական իրավունքն արծարծվել է մի շարք կրոնական երգերում ու տաղերում, մարմնացել սրբազան գրքերի մեջ, որտեղ օրենքներն ու իրավաբանական կանոններն ընդունվում էին իբրև աստվածային սահմանած հրամաններ, աստվածային կամքի արտահայտություններ: Այդպիսին են գոնե Վիշնուի, Մանուի օրենքները, Ապաստամբա և Արտհաշաստրա ժողովածուները և այլ օրենքներ, որոնք իբր թե Բուդդայի անձնավորության էությունից են բխում, նրա աստվածային գերագույն իշխանության գաղափարով են կարգավորում մարդկային փոխադարձ հարաբերությունները:

Ջրադաշտական կրոնի վարդապետության բովից դուրս եկած Զենդ-Ավեստան արդյոք իր իրավաբանական նորմերով չի՞ մերկայացնում Ահուրամազդայի հզոր կամքը, որով ղեկավարվել են հին պարսիկներն իրենց առօրյա սոցիալ-իրավական հարաբերություններում²: Իսկ թե ինչ աստիճանի փոխկապակցված են եղել իրավունքն ու կրոնը Հին Եգիպտոսում, կարելի է կարծիք կազմել այդ երկրի աստվածների պանթեոնը հպանցիկ ուսումնասիրելով: Այստեղ ամեն ինչ և ամեն բան կապված է եղել որևէ աստծո հետ, և նույնիսկ երկրի անունը «Այկապտա» - «Պտաի ոգու պալատ», կապված է եղել դարբինների հովանավոր աստված Պտաի ողորմածության և մեծահոգության հետ: Ավելին. եգիպտացիներն արդարության և օրենքների առանձին աստված են ունեցել Տոտ անունով, որը զբաղեցրել է Հին Եգիպտոսի գերագույն աստված Ռաի վեզիրի պաշտոնը³:

Հին աշխարհի մեծագույն քաղաքակրթություններից մեկը ստեղծողները՝ շումերները, երկրի վրա և նրա ընդերքում գտնվող ամեն ինչի սկիզբ համարում էին իրենց երկրի աստվածներին, որոնք կյանք են պարգևել մարդկանց և օժտել բանականությամբ: Նրանց հրամանով և օգնությամբ ստեղծվում են մարդկությանը հայտնի ամենահին գրավոր օրենքները Ուրում և Լագաշում, որոնց հիման վրա էլ մ.թ.ա. XVIII դ. ծնվում է հին աշխարհի իրավական մտքի անգուգական հուշարձանը՝ Համմուրաբիի օրենսգիրքը: Դրա նախաբանում ասվում է. «Այնժամ ինձ՝ Համմուրաբիին, փառավոր, աստվածավախ թագավորին, որպեսզի շողալու հնաբավորություն տամ արդարությանը երկրում, որպեսզի կործանեմ անօրենքներին ու

¹ История государства и права зарубежных стран под ред. Галанзы. Москва, 1963, стр. 557.

² Ավելի մանրամասն տե՛ս Ա. Գ. Սուրիալան, Հին իրանական իրավունքը ըստ Սասանյան դատասանգրքի: Երևան, 1980 թ.:

³ История государства и права зарубежных стран под ред. Галанзы. Москва, 1963, стр. 54.

չարագործներին, որպեսզի ուժեղը չճնշի թույլին, որպեսզի ես, ինչպես Օամադը, ծագեմ սևագլուխների վրա և լուսավորեմ երկիրը, Ամուն ու Էնիլը կոչեցին ի բարօժագեմ սևագլուխների վրա և լուսավորեմ երկիրը, Ամուն ու Էնիլը կոչեցին ի բարօժություն մարդկանց»⁴։ Եվ չնայած օրենսգիրքն աչքի է զարնում իր ընդգծված «աշխարհիկությամբ», բայց Համմուրաբին ի լուր աշխարհի հայտարարում է իր օրենքների աստվածային սահմանման մասին։

Օրենքների ու աստվածային կամքի փոխկապակցվածության մի շատ ուշագրավ տեղեկություն կա Հերոդոտի մոտ՝ կապված պելասգների սովորությունների հետ։ Պատմաբանը վկայությամբ, պելասգները զոհեր մատուցելիս ոչ մի աստծո անուն չէին տալիս, քանի որ նրանք դեռ չէին իմանում այդ անունները։ Պելասգները նրանց «աստվածներ» կոչեցին այն պատճառով, որ նրանք եղել են աշխարհի կարգ ու կանոնը և բոլոր սովորությունները հաստատողները⁵։ Այսինքն ստացվում է, որ «աստված» և «կարգ-օրենք» բառերը նույն նշանակությունն են ունեցել և հավասարազոր հասկացություններ եղել հին հույների մոտ։

Կրոնի և իրավունքի այդ անբաժանելի հասկացությունը, հոմանիշ նշանակությամբ ըմբռնումն իրրև աստվածային կամքի արտահայտություն, մի բնորոշ, ընդհանրացած երևույթ է մարդկության մշակութային պատմության մեջ։ Մենք շատ հեռում կգնայինք, եթե այստեղ փորձեինք մեկ առ մեկ թվել կամ աչքի անցկացնել բոլոր բազմաթիվ այն փաստերը, որոնք ապացուցում են զանազան ժողովուրդների մեջ գոյություն ունեցած աշխարհայացքները կրոնի և իրավունքի հոմանիշ նշանակության ու միատեսակ ըմբռնման մասին։

Ինքնըստիմյան ակներև է, որ եթե իրավունքի այն նորմերը, որոնցով կարգավորվում են հասարակական փոխադարձ հարաբերությունները, աստվածային կամքից բխած էին ճանաչվում և կրոնական գաղափարներով սրբազործվում, այն ժամանակ այդ տեսակ իրավունքի միակ պաշտպանողն ու գործադիրը, այդ տեսակ իրավունքի միակ ստեղծագործողներն ու խմբագրողները կարող էին լինել միայն հոգևորականները՝ լինեն նրանք հեթանոսական, քրիստոնեական, լինեն մահմեդական կամ բուդդայական կրոնների։ Իրավունքի զարգացման պատմության մեջ մշտապես նկատում ենք, թե ինչպես ամենուրեք հոգևոր դասի ազդեցությունը շեշտակի աչքի է ընկնում բոլոր իրավական հարաբերությունների կարգավորման ոլորտում՝ որոշ բնույթ ներշնչելով իրավաբանական աշխարհայացքների ամրապնդման գործընթացին։ Այդ ազդեցությունը իրականացնում էր ոչ միայն տեսականորեն, այլև գործնական կերպով, թեև զանազան տեղերում՝ իր ուրույն ձևերով։

Հին Հնդկաստանում քրմերը՝ բրահմանները, հանդես էին գալիս դատարաններում իրրև թագավորների անպայման ու անհրաժեշտ դատավորակիցներ, այդ քրմերի դատարանները շատ անգամ փոխարինում էին թագավորականին։ Նույնիսկ ավելին. ըստ հին հնդկական հասարակության կատալոգի կառուցվածքի, բրահմանների դասն առաջինն ու բարձրագույնն էր մնացած դասերի համեմատ, քանի որ Բուդդան նրանց ստեղծել էր իր զվկից։ Բրահմանները միայն, ըստ հին հնդկական իրավունքի,

⁴ Законы Хаммурапи, Пер. И. М. Дяконова, Вестник древней истории. 1952, №3, стр. 225.

⁵ Հերոդոտոս, Պատմություն գրքից, Թարգ. Ս. Կրկյաշարյանի։ Երևան, 1986 թ., էջ 109։

տիրապետում էին օրենքների մեկնաբանման բացառիկ շնորհին, իսկ թագավորները պատկանում էին քշատրիների դասին և այդ իրավունքից չէին օգտվում:

Հին Եգիպտոսում ու Բաբելոնում քրմական դասը տիրապետություն էր անում պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ չմոռանալով մահ իր հիմնական կրոնական պարտականությունների մասին: Բաբելոնում դատավորների մեծ մասը մշակակվում էր քրմերի դասից, իսկ դատավորն ինքը համարվում էր երկրի գերագույն քուրմն ու արդարության երաշխավորը և բարձրաքանդակներում հաճախ պատկերվում կշեռքը ձեռքին⁶, արևի աստված Շամաշի հետ:

Հին գերմանների մոտ քրմերը ղեկավարել են ժողովրդական ժողովները, ուր օրենքներ ու իրավական կարգեր էին մշակվում: Այդ քրմերը, ինչպես վկայում է I-II դդ. հոռմեական պատմագիր Կոռնելիոս Տակիտոսը, ծագումով Գալլիայից է եղել և քաջատեղյակ իրենց ժողովրդի մեջ տիրող սովորություններին: Հին Գալլիայում քրմերը, որոնք կոչված էին դատավորական պարտականությունների՝ իրենց դատաստանի իրավասությանը ենթարկելով բոլոր քաղաքացիական ու քրեական երևույթները, սահմանում էին օրենքներ, դատավճիռներ ու որոշումներ հատուկ խորհրդավոր բանաձևերով, որոնց ուժ էին տալիս և սրբազնացնում զանազան կրոնական ծեսերով ու ողջակեզներով:

Հին Հռոմում մուլնպես քրմերին էր վերապահված իրավաբանական երևույթների ու օրենքների մեկնաբանությունն ու բացատրությունը: Այդ պարտականությունը կատարում էր պոնտիֆիկների կոլեգիան, որի տված մեկնաբանություններն այս կամ այն օրենքի վերաբերյալ պաշտոնապես ընդունվում էին պետության կողմից և դառնում պարտադիր դատավորների համար: Դեռևս թագավորական ժամանակներից պոնտիֆիկների քրմական կոլեգիան մեծ ազդեցություն ուներ երկրում իրավական ամբողջ ոլորտի վրա, և սրա քրմապետը՝ pontifex maximus-ը, համարվում էր մարդկային ու աստվածային գործերի միջնորդ ու հաշտարար դատավոր: Նրան էր պատկանում մահ պատժիչ իշխանությունը սակրալ հանցագործությունների դեպքում, և մա կարող էր, ասենք, կուսության ուխտը խախտելու համար մահապատժի ենթարկել Վեստա աստվածուհու քրմուհիներին⁷:

Փոքր Ասիայում, Բյուզանդական կայսրության հպատակ արևելյան ժողովուրդների մեջ, ուրեմն, ի միջի այլոց՝ մահ Հայաստանում, մախնի քրիստոնյաներից ավանդվել էր մի հին սովորություն, այն է՝ իրենց վեճերը, իրավական գործերը լուծելու համար դիմել ոչ թե աշխարհական, այլ հոգևոր դատարաններին: Եվ ահա բյուզանդական կայսրերը մի շարք Novella-ներով այդ սովորությանը իրավական ուժ են տալիս: Կոստանդին Մեծ կայսրը Արևելքի բոլոր եպիսկոպոսներին տալիս է դատավարության և դատաստանական իրավասության լիազոր իրավունքներ, այսպես կոչված՝ *andientia episcopalis* հիմնարկության հաստատությամբ: Սրա էությունն այն էր, որ դատով, բողոքով լուրաքանչյուր կողմը իրավունք ուներ հակառակորդ կողմին, մուլնիսկ վերջինիս կամքին հակառակ, դատաստանի տանել եպիսկոպոսի մոտ, որն այս դեպքում կատարում էր դատավորի դեր: Ավելի ևս

⁶ Ժամապարհորդություն դեպի Հին Բաբելոն, Քլեմեն-Բրանդտ: Երևան, 1981 թ., էջ 169:

⁷ История государства и права зарубежных стран под ред. Галанзы. Москва, 1963, стр. 204.

հետաքրքրական է այն դերը, որ խաղացել է հոգևոր դասը Արևմտյան Եվրոպայում միջին դարերում ընդհանրապես իրավունքի և մասնավորապես պատժական իրավունքի զարգացման գործում: Այն հիմնական սկզբունքները, որոնք ծնունդ տվեցին հոգևոր պատժական իրավունքի համար որպես ելակետ, կայանում էին մրա-էին հոգևոր պատժական իրավունքի համար որպես ելակետ, կայանում էին մրա-նում, որ ոճրագործության մեջ կարծում էին տեսնել մարդկային ներքին զգացողության արտահայտությունը, մարդու ներքին բնույթից բխած մի մեղանշանը դեպի առավաճային օրինականությունը: Իրավունքը տիրապետող այդ սկզբունքների համաձայն, իր պատժիչ միջոցներով, պիտի մաքառեր մարդկային մեղագործության բոլոր սաղմերի դեմ, պետք է դուրս վաներ մարդու ներքին աշխարհից «չարության» արմատները և այնտեղ հաստատեր խաղաղություն, որպեսզի այդպիսով մարդու և Աստծո միջև իրոք հաշտություն առաջանար: Այդ հիմունքներն այնքան խորն էին արմատացել միջնադարյան իրավագիտակցության մեջ, որ հոգևոր պատժիչ իրավունքը դարեր շարունակ իշխում էր արևմտյան բովանդակ իրավունքի մեջ և մուլհիսկ ծնեց դատավարության հատուկ սկզբունքներ ինկվիզիցիայի ժամանակներում:

Մենք տեսնում ենք, թե ինչպես միջնադարյան Անգլիայում և Ֆրանսիայում այդ հիմնական սկզբունքների ազդեցության ներքո եկեղեցական օրենսդրությունը զրավել էր հասարակական-պետական կյանքի բոլոր ոլորտները և իր սահմանած նորմերով կարգավորում է քաղաքացիական իրավական բոլոր երևույթները:

Նույն փաստերը մշտապես ենք մահ հայոց իրավունքի պատմության մեջ: Բավական է լոկ աչքի անցկացնել հայոց եկեղեցական ժողովների որոշումները, հայոց կանոնական իրավունքի նորմերը, որպեսզի տեսնենք, թե ինչ մեծ դեր են խաղացել հոգևորականները հայկական իրավունքի զարգացման պատմության մեջ, թե ինչ ոգի ու կնիք են դրոշմել հայ ժողովրդի իրավական հարաբերությունները կարգավորող նորմերի վրա: Այստեղ արժե կանգ առնել Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վրա, ուր այնքան մախամեծար մշանակություն է տրվում, այսպես կոչված, «հոգևոր» կամ «եկեղեցական» դատաստանին: Վերջինիս ենթակա էին մախ այն բոլոր գործերը, որոնք վերաբերում են Եկեղեցուն. «զեկեղեցոյ դատաստան եպիսկոպոս հոգասցէ», և ապա՝ այն բոլոր գործերը, մուլհիսկ աշխարհական, եթե այդ տեղերում չկան աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ, «Եւ ի տեղոջ, ուր ոչ իցեն թագատր կամ իշխանք, պարտ է լեպիսկոպոս տալ զայս յաւանդ, զի զամենայն դատաստանս հոգասցեն»⁸:

Բացի այդ, հայ քաղաքական կյանքը, մասնավոր միջին դարերում, երբ հայերը իսպառ զրկվել էին սեփական քաղաքական իշխանությունից, այնպես էր կազմակերպվել, որ հոգևորականությունը միակ ներգործական ներկայացուցիչը դարձավ իրավաբանական հարաբերությունների կարգավորման մեջ, միակ ղեկավարը դատաստանական ու վարչական հիմնարկություններում:

Հոգևորականության՝ կրոնական հաստատությունների այդ սպասավորների այդ տեսակ ազդեցությունն իրավունքի զարգացման վրա միանգամայն բնական

⁸ Վ. Բատամյանց, Մխիթար Գոշի Դատաստանագիրը հայոց: Վաղարշապատ 1880 թ., Նախադրում, Ե. գլ., եր. 26:

էր: Հոգևորականներն անցյալում ունեին ավելի լայն հասարակական գործունեության ասպարեզ և անհամեմատ ավելի մեծ քաղաքական դեր էին խաղում ժողովուրդների պատմության ընթացքում, քան ներկայումս: Հոգևոր դասի ներկայացուցիչները, լինեին նրանք քրմերը թե քահանաները և այլն, վաղեմի ժամանակներից հայտնի էին իբրև բժիշկներ, իրավագետներ, աստղագետներ և ընդհանրապես գիտուններ, որոնք իրենց պարտականությունն էին համարում զբաղվել ոչ միայն դեպի աստվածություններն ու կրոնական-քարոշական հիմնարկությունները մարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերով, այլև ուսումնասիրում, գիտակցում և ըմբռնում էին մարդկանց փոխհարաբերությունները դեպի մարդիկ և դեպի շրջապատող բնությունը:

Վերոհիշյալ բոլոր փաստերը ապացուցում են մի հետաքրքիր երևույթ. որ իրավունքի և կրոնի հասկացողությունները զարմանալի մեծությամբ ամեն տեղ միացած, ձուլված են եղել և կրկնվում են գրեթե բոլոր ժողովուրդների մտավոր-կուլտուրական զարգացման պատմության էջերում: Ինչո՞ւ բացատրել տարբեր ժողովուրդների աշխարհայացքներում տիրապետող այդ երկու հասկացությունների միատեսակությունը, հոմանիշ նշանակություն ունեցող պատճառները: Անշուշտ ամենուրեք հիմքը նույնն է լինելու, եթե մենք պատահում ենք այդ տեսակ մի ընդհանուր երևույթի, ընդհանրացած մի փաստի: Այդ հիմքը պիտի որոնել մաթեմատիկայի պաշտամունքի մեջ, մի պաշտամունք, որը նույնպես տիեզերական ընդհանրական բնույթ ունի գրեթե բոլոր ժողովուրդների մոտ:

Ամբողջ մաթեմական կրոնը պարփակված էր ընտանիքում, նրա օջախի շուրջ: Տան մեծը, մահապետը, միակ քուրմը, միակ հոգևոր պետն էր, որ վարում էր ընտանիքի բոլոր կրոնական արարողություններն ու ծեսերը, մաթեմատիկոսն ու անշեղորեն հսկում մաթեմատիկայի պաշտամունքն ու աստվածների երկրպագումը⁹: Նահապետը, իբրև իր ընտանեական կրոնի միակ կատարողն ու մեկնաբանողը, միայն ինքն իրավունք ուներ իր մաթեմատիկայի կրոնական վարդապետությունը, մաթեմատիկայի, որոնք նրա կրոնական աշխարհայացքում արդեն աստվածացվել էին, ավանդելու և ուսուցանելու իր անմիջական ժառանգին, որը հետագայում պիտի հաջորդեր նրան: Բայց միևնույն ժամանակ գերդաստանի մահապետը, ինչպես ցույց են տալիս գիտական հետազոտությունները, օժտված էր իր ընտանիքի սահմաններում այնպիսի իրավական դիրքով ու հեղինակությամբ, որը նրան տալիս էր գերդաստանի միակ ներկայացուցչի նշանակության բոլոր իրավական-սոցիալական հարաբերությունների ոլորտում և հասարակական համակեցության մեջ: Նահապետի *patria potestas*-ը տարածվում էր գերդաստանի անդամների վրա ոչ միայն իր պատերի ներսում, այլև նրանից դուրս, պետական-հասարակական բովանդակ մթնոլորտում: Նրա անձնավորության մեջ միացած էին թե՛ դատավորի, և թե՛ օրենսդրի, թե՛ զինվորական հրամանատարի, և թե՛ գերդաստանի բացարձակ հրամայողի բոլոր իրավունքներն իր ընտանիքի ամբողջ կազմի վրա¹⁰:

⁹ Օջախի մաթեմատիկայի պաշտամունքի մասին մանրամասն տե՛ս Խ. Սամվելյան, Հայ ընտանեկան պաշտամունքը, Ազգ. հանդես, XII, XIII, XIV:

¹⁰ Արսեն վրդ. Ղլտմյան, Հայոց հին իրավունք, ընտանեկան իրավունք: Ալեքսանդրոպոլ, 1903, էջ 83:

Ուրեմն գերդաստանի մահապետի իրավական դրությունը բնորոշվում է նրանով, որ մահապետանակ համարվում է թե՛ հոգևոր, և թե՛ աշխարհիկ տեր իր ընտանիքի, իր սերնդի: Այսինքն մահապետը մահապետանակ և՛ քուրմ է, և՛ դատավոր, և՛ բախանա, և՛ օրենսդիր, և՛ գործադիր-կարգադրող իր ընտանիքի սահմաններում: Սրանից տրամաբանորեն հետևում է, որ մախնական հասարակական հարաբերությունները կարգավորվում էին այն իրավաբանական նորմերով, որոնք գործում, մշակվում էին մահապետական գերդաստանի, տոհմի աշխարհայացքում, կոմիվում ու ամբողջանում այն կրոնական մթնոլորտում, որտեղ օջախի ու մախնայրերի պաշտամունքը դարձել էր գերդաստանի գոյության ու ծաղկման հիմքը:

Ընտանեկան կազմակերպությունը, ընտանիքում ձևավորված պատկերացումները, լինելով իրավաբանական մտածողության սկզբնական հիմնաքարեր, դառնալով մախնական իրավունքի գոյացման ու զարգացման առաջին աստիճաններից մեկը, ակնհայտ է, որ ամբողջովին պիտի մարմնավորեին, տողորեին ձևավորվող իրավաբանական նորմերի ոգին այն կրոնական աշխարհայացքով, որոնցով դեկավարանական նորմերի ոգին այն կրոնական աշխարհայացքով, որոնցով հանձնվում էին տոհմային կազմակերպությունները՝ հանձնում իրենց տոհմապետների ու մահապետների: Հետագայում, երբ այդ տոհմական կազմակերպությունների միջից ծնունդ առան և զարգացան պետական մարմիններ ու հաստատություններ, հասարակական հարաբերությունները շարունակում էին կարգավորվել նույն իրավաբանական նորմերով, որոնք տակավին չէին ազատված իրենց մախնական կրոնա-բարոյական աշխարհայացքից: Իրավունքն ու կրոնը կամ, ավելի ճիշտ ասած՝ իրավունքն ու բարոյականությունը՝ դեռևս կազմում էին մի ընդհանուր հասկացություն, մի ձուլված զաղափար և հասարակական հարաբերությունների կարգավորման առումով դիտվում մեկ աշխարհայեցողությամբ:

Սոցիալ-մշակութային կյանքի զարգացման հետևանքով դարերով ապրող մախնայաց բարքերն ու սովորությունները, սակայն, հասարակական նոր ազդակների շնորհիվ, սկսում են դուրս գալ իրենց միակերպ գոյությունից և ենթարկվել բաժանման պրոցեսին՝ դիֆերենցիայի, մի հասկացողությունից տարրալուծվում են երկու և ավելի ինքնուրույն հասկացություններ, զաղափարներ: Այսպիսով, ժամանակի ընթացքում մարդկային միտքն ընդունակ է դառնում առանձին երևույթները տարրալուծելու իրենց բաղկացուցիչ մասերի և, գտելով, անջատելով առանձին հասկացությունները, տալ նրանց ինքնուրույն, անկախ դրություն: Մտավոր զարգացման այդ պրոցեսում իրավունքի ու կրոնի կամ բարոյականության հասկացությունները միմյանցից անջատվում են: Այդ բաժանման պրոցեսը շատ երկար ժամանակամիջոցում էր կատարվում՝ ընդգրկելով մի ամբողջ պատմական շրջան: Այդ երկու անջատված հասկացությունների միջև, սակայն, տակավին մնում էր մի առնչություն, փոխադարձ մրցում, որի շնորհիվ իրավունքը թեև բաժանվել, անջատվել էր կրոնից, այնուամենայնիվ կրում էր դուալիստական ձև: Մենք դա տեսնում ենք հին հռոմեական և հունական իրավունքների օրինակի վրա, որոնք իրենց զարգացման ամբողջ պատմական շրջանում տողորված էին դուալիստական սկզբունքներով, այն է՝ պարփակում էին մի կողմից իրավունքի մարդկային, քաղաքացիական և մյուս կողմից՝ կրոնական, բարոյական տարրեր: Իրավունքի այդ դուալիզմը շատ բնորոշ դրոշմվել է հին հույների և հռոմեացիների դիցաբանության մեջ, որտեղից

մրա հետքերը շարունակվել են պահպանվել ու փոխանցվել՝ մերմոծվելով մակ մրանց հին օրենսդրության մեջ:

Հին հունական իրավունքի պատմության մեջ այդ դուալիզմն արտահայտվում էր մի կողմից *θεσμοι*, *θεμεις* Թեմիդայով, իբրև ճշմարտության և արդարադատության աստվածուհի, մյուս կողմից՝ *νόμος* բառերով, որ մշակակում է աշխարհական օրենք: Հին հռոմեացիների իրավունքի մեջ մտնապես հիշյալ դուալիզմը բնորոշվում էր երկու հայտնի տերմիններով՝ *fas*, իբրև կրոնական, աստվածային օրենք, և *jus*, իբրև աշխարհական, մարդկանց վարքագծի կանոններ սահմանող օրենք: *Fas lex divina, jus lex humana est* - ասում էին հին հռոմեացիները:

Մտավոր զարգացման պրոցեսը հավասարաչափ չզարգացավ Երկիր մոլորակի վրա և, հակառակ այդ ասպարեզում Արևմուտքի ցուցաբերած մեծ առաջընթացին և հաջողություններին, Արևելքում մարդկային մտածողության սահմանները չկարողացան դուրս գալ իրենց անշարժությունից, և մենք մույնիսկ մեր օրերում ականատես ենք լինում մուսուլմանական սաստկացող մոլեռանդության դրսևորումներին, որն անշուշտ ավելի է նպաստում արևելյան ժողովուրդների մտավոր կախվածությանը կրոնափիլիսոփայական գաղափարներից:

Օգտագործված գրականության ցանկ

1. История государства и права зарубежных стран, под общей редакцией П. Н. Галанца. Москва, 1963
2. Ա. Գ. Սուքիասյան, Հին իրանական իրավունքը ըստ Սասանյան դատաստանագրքի: Երևան, 1980
3. Законы Хамурапи, перевод И. М. Дяконова, Вестник древней истории; 1952, стр. № 3
4. Հերոդոտոս, Պատմություն իմը գրքից, թարգ. Ս. Կրկյաշարյանի: Երևան, 1986
5. Է. Քլենգել-Բրանդտ, Մանապարհորդություն դեպի Հին Բաբելոն: Երևան, 1880
6. Վ. Բաստամյանց, Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց: Վաղարշապատ, 1880
7. Խ. Սամվելյան, Հայ ընտանեկան պաշտամունքը: «Ազգագրական հանդես», գիրք XII, XIII, XIV
8. Արսեն վրդ. Ղլտնյան, Հայոց հին իրավունք, ընտանեկան իրավունք: Ալեքսանդրապոլ, 1903
9. Կոռնելիոս Տակիտեսյ Տարեգիրք, թարգ.՝ Ե. Հիլմիզեան: Վենետիկ, 1903
10. И. Покровский, История римского права. Петроград, 1919

